



ՀՀ Արարատի մարզ գ. Լանջազատ /Զովաշեն/
Հեռ. (Тел.) 091-58-28-87

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՍԱՐՁԻ ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ
ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2016 թվականի հունվարի 11 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելքոնյանը:
Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը, ավագանու անդամներ գյուղապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան բուժբույր, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՅԻՆ -- Արարատի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2015 թ. երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՅ . ուր

2015թ. երկրորդ կիսամյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 322 ընդունելություն:
Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 265 տեղեկանք, ստացել 98 - ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2015թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման ջրատարները, ասֆալտապատվել են համայնքի Մ, Մաշտոցի, Դ, կանայանի, Գ. Նժդեհի փողոցներն ամբողջությամբ, Խտույակովի, Կոնիտասի և Ջ, Անդրանիկի փողոցները ասֆալտապատվել են մասնակիորեն: Փոխվել են համայնքի տարածքում գտնվող ցերեկային լուսավորության լամպերը (մասնակի):
2015թ երկրորդ կիսամյակի ընթացքում Մ. Մաշտոցի փողոցի վրա կառուցվել է նոր բուժամբույլատորիա :

Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտորման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ :
Համայնքի ղեկավարի աջակցությամբ ընթացքի մեջ է համայնքի բնակիչներին բուժարհմիկատներով, և սերմերով ապահովելու հարցը:
2015թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 2188.9 հազար դրամ.

բ / գույքահարկ որից՝ շենք և շինություններ 250.0 հազար դրամ, ավտոմեքենաներ – 2150.5 հազար դրամ

գ / տեղական տուրք՝ 54.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 857.4 հազար դրամ

Համայնքում բուժամբույլատրիա կառուցելու համար համայնքի բյուջեից հատկացվել է 3.021.600 դրամ:

Համայնքում խրականացվել է մի շարք միջոցառումներ.
Հանդիսավորությամբ նշվել է սեպտեմբերի 21 - ր՝ անկախության օրը , նշվել է նաև ուսուցչի օրը :
Սեպտեմբերի 1-ին համայնքի 1 - ին դասարան հաճախող երեխաներին գյուղապետարանի կողմից տրամադրվել է նվերներ :
Գեղեցիկ միջոցառումների շարք է կազմակերպվել երեխաների համար Նոր տարվա կապակցությամբ : Ամանորի միջոցառման ժամանակ երեխաներին բաժանվել են նվերներ, հրավիրված են եղել նաև լրագրողներ միջոցառումները լուսաբանելու համար:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2370.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպաստ՝ 100.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 482.0 հազար դրամ, արտադպրոցական դաստիարակության համար (Արևշատի երաժշտական դպրոց) 50.0 հազար դրամ

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1338.4 հազար դրամ.
2016թ 1 ին կիսամյակում նախատեսված է կույտուրայի տան բակի բարեկարգում և ծառատունկ, խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերանորոգում և ջրատարերի մաքրում:
Լանջագատ համայնքում 2016 թ. մայիսի 28 ին նախատեսվում է անցկացնել ձյուղոյի հանրապետական հուշանրցաշար՝ նվիրված ազատամարտի վետերան՝ Ռորերտ Հրայրի Հակոբջանյանի հիշատակին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ